ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"13" ապրիլի 2013թ. № 44-Ա

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Խ Ո Ւ Մ Բ Ս Տ Ե Ղ Ծ Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ն կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Սյունիքի մարզի քննչական բաժնի ավագ քննիչ Ա. Հովհաննիսյանի 2013 թվականի մարտի 29-ի <<Մասնագիտական ստուգում նշանակելու մասին>> որոշման պահանջների, **կարգադրում եմ՝**

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքային համայնքում մասնագիտական ստուգում իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Աշոտ Մարդյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ /խմբի ղեկավար/
Սեյրան Ավետիսյան	-	ՀՀ Սունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ
Սուսաննա Դավթյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
Թադևոս Ղազարյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ
Մուշեղ Կոստանդյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ
Ռազմիկ Ավետիսյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ
Սարիկ Աղաբեկյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
Արմեն Մարտիրոսյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասագետ

2. Աշխատանքային խմբին՝ մասնագիտական ստուգումն իրականացնել 2013 թվականի ապրիլի 17-ից մինչև մայիսի 8-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքները ներկայացնել ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Սյունիքի մարզի քննչական բաժին:

3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2013թ. ապրիլի 13
ք. Կապան